ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ
ՄՆԱՑԱԿԱՆ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ N8 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
ՊՈԱԿ

ՀՀ ք.Գավառ,Հ.Աբրահամյան 4/6
էլ. փոստ gavar8@schools.am

№ 754
27.09.2022թ.
023

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթը տեղի չի ունենա հավակնորդ չլինելու պատճառով: Սահմանված կարգի համաձայն մրցույթի ժամկետը երկարաձգվում է:

Կից ներկայացնում եմ կառավարման խորհրդի նիստի արձանագրությունը և մրցույթի հայտարարության տեքստը:

Առդիր 2 էջ:

Հարգանքներով՝
Խորհրդի քարտուղար՝ Աննա Խաչատրյան

ՔԱՂՎԱԾՔ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ կոլեգիալ կառավարման մարմնի՝ 2022 թվականի սեպտեմբերի 26 –ի խորհրդի արտահերթ նիստի արձանագրությունից:

Խորհրդի սույն նիստը համարվում է իրավազոր, քանի որ նիստին մասնակցում են տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարած հաստատության՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի ընտրության ժամանակ ձայնի իրավունք ունեցող 9 (ինն) անդամներից՝ 6 (վեց) անդամները: Նիստը վարում է խորհրդի ավագ անդամ Ե. Խուրշուդյանը, արձանագրում՝ քարտուղար Ա. Խաչատրյանը:

Օրակարգում

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի անցկացման երկարաձգման մասին հարցը (Զեկուցող՝ Ե. Խուրշուդյան):

Լսեցին 1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի անցկացման երկարաձգման մասին հարցը: Զեկուցողը նշեց, որ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար 2022 թվականի հոկեմբերի 10-ին հայտարարված մրցույթին հայտ չի ներկայացվել: Ուստի խորհուրդը

Որոշում է՝

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի մրցույթը հավակնորդ չլինելու պատճառով սահմանված կարգի համաձայն հետաձգել 15 աշխատանքային օրով:

2.Հայտարարել «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի նոր (երկարաձգված) մրցույթ:

3.Երկարաձգված մրցույթի փաստաթղթերն ընդունել 27.09.2022թ.-ից մինչև 17.10.2022թ.:

4. Մրցույթն անցկացնել 31.10.2022թ.:

Դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝

խորհրդի քարտուղար՝ Ա. Խաչատրյան

Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ կետի համաձայն՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով:

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցում 2022 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 15:00, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հոկտեմբերի 31-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ Հ. Աբրահամյան փողոց 4/6

Տեղեկությունների համար դիմել Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Մ.Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցի խորհրդի կողմից լիազորված անդամ Աննա Խաչատրյանին

Հեռախոսահամարը՝ 077-84-77-16, էլեկտրոնային հասցեն՝ annaani@mail.ru